



• Visegrad Fund

ԵՐԱՇՏԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

2023 Օգոստոս


Բովանդակություն

<i>1. Զերմաստիճանի ամսական շեղում.....</i>	<i>3</i>
<i>2. Տեղումների ամսական շեղում.....</i>	<i>3</i>
<i>3. Երաշտի ինտենսիվության ինդեքսներ:.....</i>	<i>4</i>
3.1 Բուսականության վիճակի ինդեքս (VCI)	4
3.2 Բուսականության նորմալացված տարբերության ինդեքս (NDVI).....	5
3.3 Գյուղատնտեսական սթրես ինդեքսը (ASI)	6
3.4 Օդերևութաբանական երաշտի ինտենսիվության գնահատումը	7

1. Ջերմաստիճանի ամսական շեղում

Օգոստոս ամսին օդի միջին ամսական ջերմաստիճանները ամբողջ հանրապետությունում գերազանցել են 1981-2010 թթ. նորման: Հայաստանի 43 օդերևութաբանական կայանների փաստացի դիտարկումների համաձայն ջերմաստիճանների շեղումները եղել են հիմնականում 2-3°C-ի սահմաններում, որոշ կայաններում ջերմաստիճանը գերազանցել է նորման մինչև 4°C-ով:


Monthly Temperature anomalies Armenia
August 2023 (1981-2010 base period)



2. Տեղումների ամսական շեղում

Օգոստոս ամսին շրջանների մեծ մասը աչքի են ընկել նորմայից ցածր տեղումներով: Նորմայից բարձր տեղումներ գրանցվել են Կոտայքում (150-160%) և Սյունիքի հարավում: Մեղրիում դիտվել է ամսական տեղումների նորմայի մոտ 330%-ը: Հանրապետության մնացած շրջաններում տեղումները հիմնականում եղել են նորմայից ցածր (40-80%), Արարատյան դաշտի և Շիրակի մի շարք կայաններում տեղումներ ընդհանրապես չեն դիտվել:

Monthly Precipitation anomalies (%) Armenia
August 2023 (1981-2010 base period)




3. Երաշտի ինտենսիվության ինդեքսներ:

3.1 Բուսականության վիճակի ինդեքս (VCI)

Բուսականության վիճակի ինդեքսը (VCI) համեմատում է ընթացիկ NDVI-ն նախորդ տարիների նույն ժամանակահատվածում դիտված արժեքների միջակայքի հետ: VCI-ն արտահայտվում է %-ով և տալիս է պատկերացում, որտեղ դիտարկվող արժեքը գտնվում է նախորդ տարիների ծայրահեղ արժեքների միջև (նվազագույն և առավելագույն): Ավելի ցածր և բարձր արժեքները համապատասխանաբար ցույց են տալիս բուսականության վատ և լավ վիճակի պայմանները:

Ինչպես երևում է FAO կայքէջում հրապարակված օգոստոս ամսվա VCI-ի քարտեզից՝ Արարատյան դաշտում, Սյունիքի հովտային շրջանների զգալի մասում և Արագածոտնի նախալեռներում դիտված բարձր ջերմային ֆոնի ազդեցության հետևանքով, բուսականության աճի և զարգացման համար դիտվել են անբարենպաստ պայմաններ:




3.2 Բուսականության նորմալացված տարբերության ինդեքս (NDVI)

Բուսականության նորմալացված տարբերության ինդեքսը (NDVI) ֆոտոսինթետիկ ակտիվ կենսազանգվածի ցուցիչ է, որը ստացվում է՝ համեմատելով կլանված տեսանելի կարմիր լույսի և արտացոլված ինֆրակարմիր լույսի քանակը: NDVI-ը սահմանում է -1.0-ից մինչև 1.0 արժեքներ որտեղ բացասական արժեքները համընկնում են բուսազուրկ տարածքներին:

Ելնելով LANDSAT 8 արբանյակի տվյալների տարածական վերլուծությունից (լուծաչափը 60 մ), տեսնում ենք, որ օգոստոսի ընթացքում երաշտային պայմանները տարածվել են Շիրակի, Արագածոտնի, Վայոց Ձորի և Սյունիքի նախալեռնային գոտիներ, ինչպես նաև երաշտային պայմաններ են դիտվել Սևանի ավազանում:


NDVI map August



3.3 Գյուղատնտեսական սթրեսի ինդեքսը (ASI)

Գյուղատնտեսական սթրեսի ինդեքսը (ASI) ցուցիչ է, որով գնահատվում է գյուղատնտեսական երաշտի ինտենսիվությունը: ASI-ն ինտեգրում է բուսականության առողջության ինդեքսի (VHI) ժամանակային և տարածական պատկերը: ASI-ն գնահատում է չորային ժամանակաշրջանի ինտենսիվությունը և տևողությունը գյուղատնտեսական մշակաբույսերի վեգետացիայի ընթացքում: 35 տոկոսից ցածր VHI արժեք ունեցող տարածքները կրիտիկական են երաշտի չափը գնահատելուց:


Ինչպես երևում է օգոստոս ամսվա արբանյակային տվյալներից հանրապետության տարածքում թույլ գյուղատնտեսական երաշտ դիտվել է միայն Արարատյան դաշտի որոշ հատվածներում: Օգոստոսի ընթացքում հանրապետության շրջանների զգալի հատվածներում կատարվել է հացահատիկային և բանջարանոցային մշակաբույսերի և որոշ պտղատուների բերքահավաք:



3.4 Օդերևութաբանական երաշտի ինտենսիվության գնահատումը

Երաշտի ինտենսիվությունը գնահատվել է Մելյանինովի հիդրոթերմիկ գործակցով՝ ըստ 38 օդերևութաբանական կայանների տվյալների: Ինչպես երևում է օգոստոս ամսվա ընթացքում Հայաստանի կենտրոնական և հյուսիսային շրջաններում երաշտային պայմաններ չեն դիտվել, իսկ մնացած շրջաններում գրանցվել է ուժեղ և շատ ուժեղ երաշտ: Այս քարտեզը համահունչ է LANDSAT 8-ի NDVI բուսականության ինդեքսի քարտեզին:


Drought Monitoring, 21-31 August, 2023




Երաշտի ինտենսիվությունը գնահատելու համար հաշվարկվել է Ստանդարտացված տեղումների ինդեքսը (SPI)-ը, որը վիճակագրական ցուցիչ է, և համեմատում է տվյալ ամսվա ընթացքում դիտված տեղումների քանակը և այդ վայրում նույն ժամանակահատվածի երկարատև

կլիմայական տեղումների բաշխման հետ: SPI-ը հաշվարկվում է ամսական կտրվածքով (SPI1) և եռամսյա կտրվածքով (SPI3):


Լրացուցիչ հաշվարկվել են SWB՝ հողի ջրային բալանսի ինդեքսը, որը հաշվարկվում է ամսական տեղումների քանակի և գոլորշունակության տարբերությամբ, ինչպես նաև SPEI-ը երաշտի ինդեքսը, որը հիմնված է կլիմայական տվյալների վրա: SPEI-ն հաշվարկելու համար որպես մուտքային տվյալ օգտագործվում է SWB-ը: Հաշվարկները իրականացվել են R Studio ծրագրային փաթեթով:



Օգոստոս ամսին համաձայն SPI1 և SPEI ինդեքսների Արարատյան դաշտում, Շիրակում, Գեղարքունիքում և Վայոց Ձորում դիտվել են երաշտային պայմաններ: SPI3-ը խոնավ պայմաններ է արտացոլում Լոռու, Տավուշի և Սյունիքի մի շարք կայաններում:



SPEI, August 2023



Այսպիսով վերլուծելով փաստացի ջերմաստիճանի և տեղումների շեղումները, ինչպես նաև բուսականության վիճակի ինդեքսների արժեքները կարող ենք եզրակացնել, որ օգոստոս ամսին երաշտային պայմաններ հիմնականում դիտվել են Արարատյան դաշտում, Շիրակում, Գեղարքունիքում և Վայոց Ձորում պայմանավորված նորմայից բարձր ջերմաստիճանով և տեղումների սակավությամբ: